ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
հասցե՝ք.Երևան, Նալբանդյան5, սենյակ 22ա, հեռախոս՝ (+37493)515-600,(+37491)515-600
էլ. հասցե՝ ldpf.foundation@gmail.com
ՀԻՄՆԱԴՐԱՄ
Իրավունքի զարգացման և պաշտպանության

ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան
Հասցե՝ք. Եղեգնաձոր, Շահումյան 5

Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամի տնօրեն՝
Գենյա Պետրոսյանից
Հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 5, 22ա սենյակ

28.08.2019թ.

ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի՛ պարոն Սարգսյան,

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների համաձայն՝

Խնդրում եմ

1. Տրամադրել տեղեկատվություն՝ 2000 թվականից մինչ այսօր ՀՀ դատական ատյաններում քննված, ինչպես նաև դեռևս քննության փուլում գտնվող դատական գործերի վերաբերյալ՝ Վայոց Ձորի մարզպետարանի կողմից տեղեկատվության չտրամադրման, սխալ/կեղծ տեղեկատվության տրման, թերի/ոչ լիարժեք տեղեկատվության տրման, տեղեկատվության տրամադրման ժամկետների խախտման, տեղեկատվություն փնտրելու, ստանալու և տարածելու ազատության այլ սահմանափակումների կիրառման վերաբերյալ գործերով՝ նշելով համապատասխան դատական գործերի համարները:
2. Տրամադրել ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի կողմից հաստատված գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկի պատճենը:
3. Հայտնել 2000 թ. մինչ օրս արդյոք գործող գաղտնագրման ենթակա գերատեսչական ցանկերում կատարվել են փոփոխություններ՝ ցանկերում ընդգրկված տեղեկությունների հիմնավորվածությունը վերանայելու արդյունքում:
4. Հայտնել արդյոք մինչև օրենքով սահմանված պահպանման ժամկետի լրանալը երբևէ գաղտնազերծվել են պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններ՝ օբյեկտիվ հանգամանքների փոփոխության հիմքով:
5. Հայտնել արդյոք 2000թ. մինչ օրս արձանագրվել է գաղտնագրված տեղեկությունների պահպանության հաստատված ժամկետների կրճատում:
6. Հայտնել Մարզպետարանում վերջին անգամ փաստաթղթերի գաղտնազերծման տարեթիվը:

Հարգանքով՝

Գ. Պետրոսյան

Հ. Հ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
Մուտքի թիվ 5294
30 08 2019